

Փիլարեայայ իշխանութեան տակ. որ նաև յաջորդ ունեցաւ յետ մահուանը՝ զԹէոփորոս Ալախօսիկ մեծանուն երաժիշտ վարդապետը:

Վկայաւոր սրտանց չհաւանելով ըրածին և եղածին, և գուշակելով ալ աւելի անպատշաճ գործեր յապագայն, իր հօրքորոջ Թոռը՝ Բարսեղ՝ եպիսկոպոս ձեռնադրեց Անոյ (1074), որ մեծ նշանակութիւն մ'ունէր՝ Հայոց մայրաքաղաքն ըլլալով, և իբրև իրեն փոխանորդ Թոռուց: Շատ տարիներ ալ չանցած (1081) հաւանեցաւ որ նա ալ այն կողմերու կաթողիկոս անուանի, ապագայ յուսով իրեն յաջորդելու: Բարսեղ գնաց ի Հաղբատ ու հօնօծեցաւ կաթողիկոս՝ ի կաթողիկոսէն Աղուանից, ներկայութեամբ միացեալ Թագաւորազանց Հայոց: Քանի մը տարի ետև Վկայասիրի նոր պանդխտութեանց ասան՝ ինքնագլուխ իշխանք և եպիսկոպոսունք ունէր ուղեցին նոր կաթողիկոս մ'ալ գնել, և հրաւիրեցին Վանայ երկրին եպիսկոպոսներէն. որոցմէ Վարագայ վանահայրն Պօղոս յանձն առաւ, եկաւ, ձեռնադրեցաւ կաթողիկոս, և աթոռը գրաւ ի Մարաշ. բայց քանի մ'ամսէ ետև զընտրով ըրածին՝ դարձաւ ի տեղը: Այս շփոթութիւնները տեսնելով Բարսեղ, միանգամայն և իր հայրագիր Վկայասիրին տկարութիւնը՝ գնաց ի Պարսկաստան առ Մէլքեշահ Թուրքաց տիեզերակալ սուլտանն, և մեծ պատուով և հրովարտակաւ դարձաւ. եկաւ ի Փոքր Հայս (1090), մերժեց զԹէոփորոս Ալախօսիկն, և հաստատելով Վկայասիրի իշխանութիւնը և իրեն փոխանորդութիւնը, յետ այցելութեան գլխաւոր քաղաքաց՝ դարձաւ իրաթոռը՝ յԱնի (1092): Ահա այս 20ամեայ շփոթ ժամանակն է 1070-90 յորում պատմիչք մեր միանգամայն 4 և ինչուան 6 կաթողիկոս կը համրեն, մէկ տեղ համրելով Աղթամարայ արքեպիսկոպոսն ալ. որք առանձինն եպիսկոպոս կ'օծէին և միւսոն կ'օրհնէին:

Հիմայ Վկայասէրն վերջին անգամ Երուսաղէմէն Թախանձանք հրաւիրուելով յիշխանաց Հայոց, մանաւանդ ի Գող Վասիլ ըսուած Հայոց մեծ և բարեպաշտ իշխանէն, որ կը նստէր ի Քեսուն քաղաքի, Մարաշայ և Սեւա լեւանց միջոց, գնաց նստաւ այս տեղի Արեգի և Կարմիր Վանաց մէջ (1101). ուր և վախճանեցաւ յետ այսպիսի 40ամեայ հայրապետութեան (1105)¹: Սակայն ինչպէս իր եռանդն և վկայասիրութիւնն չէր պահպանած ինչուան վերջը, այսպէս մտաց կամ հոգւոյն սրատեսութիւնն ալ աւելի ևս լուսաւորեալ կ'երևի. իմանալով որ մօտեցեր է ժամանակն հանգուցեալ հայրապետաց կարգը գասուելու, կանչել տուաւ զփոխանորդը Բարսեղ՝ յԱնի, և պատուիրեց որ նստի Շուղքի վանքերը, և երբ յետին հրաւեր մը հասնի՝ փութայ գալու իր վերջի կտակն ընդունելու: Քիչ ատենէ հասաւ հրաւերն. փութացաւ Բարսեղ հանգուցանելու ալեւորեալ հայրապետը, և ատրիցեալ հասկը շտեմարանելու Կարմիր Վանաց եկեղեցւոյն մէջ, ուստից փոխադրեցաւ ի Մովսէս, և անկից ի Հոռմկլայ:

¹ Թուի վախճանեալ ի 26 օգոստոսի ամսեան, վանքի այն թուին հանգիպի շաբաթ օր և Երեմիայ մարգարէին տօնն, յորում նշանակէ զմահն Վարդան պատմիչ, սակայն չի յարմարիր Տրէ ամիսն՝ յորում այս գիպուածն գնէ:

Ինչ էին Գր. Վկայասիրի կտակին աւանգնելը: — Երկու բան մեղի յայտնի է. մէկ մը նախախնէալ Տօնամակին լրումը, զոր յանձնեց Կիւրակոս վարդապետի, և նա կատարեց: Երկրորդն աւելի մեծ և Թանկագին. Յուստակ ակունք կամ լուսածին մարգարիտք, զոր Քրիստոսի հարսին կ'ուզէր ընծայել. երկու եղբարք, գեաւաբուսիկ գաւակք իր քեռորդույ Ապիրատ իշխանին, մէկն Գրիգորիս, հազիւ 10ամեայ, միւսն Ներսէս իբրև քառամեայ: Ոչ այնքան արեան ժառանգութեան ջանքով որչափ աստուածային նախատեսութեամբ գուշակեց ներանձնացեալ ծերունի հայրապետն՝ իր Թոռանց ապագայն և գերազանցութիւնը. գրեթէ մարգարէաբար կը տեսներ կամ գիտէր, կամ գուցէ իրեն եղած էր այն հրեշտակային յայտնութիւնն թէ Ներսէս Շնորհալի պիտի ըլլայ. գուցէ և ինքնին կանխեալ այնպէս անուանէր զկայտաւ երախայն, և անտարակոյս ըլլալով անոր և երեց եղբոր Հոգւոյն սրբոյ շնորհաց օթեան ըլլալուն, զոր յայտնէր և իրենց շարժմունքն և բնաւորութիւնն և հասակէն վեր ցուցած զգաստութիւնն և հանձարն, անդարձ կտակի պէս պատուիրեց Բարսղի, որ սրբութեան գագարներու մէջ սնուցանէ այն երկու տատարակները, ինչպէս որ ինքնին զանոնք ծնողացմէ կորզելով իր ծնգաց վրայ կը մեծցընէր, և յետ իրեն՝ ինքն ալ կտակէ և յաջորդեցընէ իր և իրենց նախնի Լուսաւորչի աթոռոյն: — Անշուշտ եթէ իր երկար և անհատաւ ժամանակի կաթողիկոսութեան ատեն թերութիւն ունեցեր էր, ասկէ լաւ աւանդով չէր կրնար ընուլ զայն: Այս յուսով և սրտի հանգըստութեամբ վախճանեցաւ Գրիգոր Բ., Թոռը լով մեր ազգին և եկեղեցւոյ մէջ անանկ մեծանուն և պայծառ լոյս մը, որ իսպառ կ'աղօտացընէ իր ատենի անուանեալ օտարաթոռ կաթողիկոսները, և միակ օրինաւոր հայրապետ կը ճանչցուի, յաջորդ Խաչկայ Բէ և նախորդ Բարսղի, և երկրորդ նահապետ Պահլաւունի հայրապետաց մերոց:

Կը շարունակուի:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՅԻՏԱԼԻԱ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐԷ ԾԻՆՉԵՒ Ի ԾԻՐ ԺԱՄՄԱԿՍ

(Տես երես 166:)

Ե. — Յեղանակ (1700-1814):

ԺԸ դարուն մէջ երկու առիթք եղան իտալական դպրութիւնը վերանորոգելու. ներսէն քիչ մ'աւելի անկախութիւնն, դրսէն՝ ազդեցութիւնն Եւրոպիոյ: Տեսանք առաջ որ ԺԶ և ԺԷ

դարուց մէջ խտալական բարդաւա-
ճանքն հաղորդեցան Սպանիոյ, փրան-
կաց և Անգղիոյ. ժԴ դարուն սկիզբն
ալ անոնց բարդաւաճանքն փոխադարձ
եկան յիտալիա. ՚ի կէս դարուն նաև
Գերմանականին ազդեցութիւնն ալ հա-
սաւ իրենց նշանաւոր հեղինակներովը,
ինչպէս Լեօնարդո, Մէօզէր, Վինքէլման,
Եւլէր, Քանդ, Վիլանտ, Կէթէ, Շիլլէր:
Բոլոր այս դարուս մէջ կ'երևի օտարազ-
դի գիտնոց գալուստ յիտալիա, և ի-
տալացի գիտնոց երթալ առ օտարս,
որով ուսումնական մշակութեան ալ
զարգացումն: Դժար է մեզի առանձնա-
բար խօսիլ մեր գիտնականաց վրայ՝ զա-
տելով դուրս գացողները ներսիններէն:

Բանաստեղծութիւնն վերերևեցաւ
ժԷ դարուն վերջերը՝ ջանիւք Արկադեան
ակադեմիայի, որ հաստատեցաւ յամի
1690. բայց ըստ բազմաց և ըստ մեզ՝
Արկադիացիք ուրիշ բան չըրին բայց
եթէ ժՁ դարու արուեստակութիւնը
փոխել ժԷ^ն, քիչ մը լաւցընելով. ՚ի
վերայ այս ամենայնի այս դարուս՝ այն
ապականեալ ճաշակաց մէջ՝ երևցան ոչ
սակաւ բանաստեղծք զանազան տեսակ
գրուածոց և նոր տեսակաց ալ, որ ինչ-
ուան այն ատեն չէին մտած մեր գրա-
կանութեան մէջ, Այս պակասութիւնս
լեցընելու մեծ ջանք ըրին Ալֆիէրի և
շատ ուրիշ բանաստեղծք: Այսպիսիք
են Ծենոյ (1669—1750), Ֆորդէկուէրի
(1676—1738), Սկիպիոն Մաքֆէի
(1675—1755), Մեդասարդիոյ (1698—
1782), Արիոնսվարսոյ (1705—1788),
Կորտոնի (1707—1798), Գասպար Կոճճի
(1713—1786), Բարինի (1729—1799),
Չեզարոդի (1730—1808), Ալֆիէրի
(1749—1803), Բինտեմոնդէ (1753—
1828), Մոնդի (1754—1828), Ֆուգո-
լոյ (1778—1827): Ասոնք ամենքն ալ
մեծ հեղինակք են և արժանաւորք ՚ի
փառաւորել որ և է դար. իրենց վար-
պետութիւնն եղաւ նմանել ժԵ դարու
ասպետական և վարդապետական քեր-
դուածոց, գրեթէ նոր ՚ի նորոյ հնարել
և ՚ի ծայր կատարելութեան հասցընել
դերասանական քերդութիւնը, ողբեր-

գութիւնը, կատակերգութիւնը, երգի-
ծական բանաստեղծութիւնը. վիպա-
սանութեան ալ ձեռք զարնելն, և ամեն
տեսակ քերդուածոց մէջ մտցընել զա-
նազանութիւն, ոյժ, կորով և մեծութիւն
նիւթոյ և ոճոյ:

Ասոնց մէջ ամենէն նշանաւորքն՝ ու-
րոց արդիւնքն ոչ միայն գրաւորական
է, այլ և բարոյական և քաղաքական,
են Բարինի և Ալֆիէրի: Առաջինն ոչ
միայն զգուշացաւ շատ հետեակ իտա-
լացի գրողաց ցածութենէն, ինչպիսիք
են Գասպի և Բասսետրոնի, այլ և իր
քերդուածոց տիրապէս օգտակարնիւթ
ընտրեց. ջանաց ուղղել ազնուականաց
մոլութիւնները, որք ամենէն աւելի խոր
արմատացեալք են յընկերութեւ: Շատ
աշխատեցաւ իր դարուն գործոյն, ոչ
շողմնելով և ոչ ալ արդարացընելով
ազգային պակասութիւնները, այլ
յայտնելով և անվախ յանդիմանելով:
Շատեր կան որ հիմայ ալ կը գայթա-
կղին այսպիսի յայանութիւններէն, և կը
յիշեն Ա Նաբոլէոնի ըսածը, թէ Աղ-
տոտ լաթերը պէտք է իւրաքանչիւր
տան մէջ լուանալ. Նաբոլէոն այդ խօսքն
ըսեր էր երբ օտարաց յարձակման վը-
տանդ կար. վաճառ զի ոչ ինքն և ոչ ու-
րիշ Փրանկ մը չեն խղճած իրենց ազ-
գայինները յանդիմանելու, մանաւանդ
թէ ամեն ազգէ աւելի համարձակ կը
կշտամբեն իրենք զիրենք. անոր համար
ալ յետ այնքան հարուածոց զոր կրե-
ցին 60 տարիէ վեր՝ կը ջանան միշտ
կանգնիլ մեծապէս զգուշանալով զի-
նուորութեան անկարողութենէ և օտա-
րաց իշխանութենէն. զի այս երկու
բանս է ազգի մը ամենէն ծանր հա-
րուած¹: Ստոյգ է որ իտալիա ոչ եր-
բէք պիտի կըրնայ ունենալ բազմաթիւ
Տանդէ, Բարինի, Ալֆիէրի, բայց ինչ-
ուան որ մեր հազարաւոր գրողքն չի-
ջանան այս արդարեւ ծանր և ճշմարտա-
խօս հեղինակաց հետեիլ, այլ ուղեն
շողորթել, պաշտպանել և ծածկել

¹ Վերջի (Փրանկ-Բրուսիական) պատերազմ-
ներէն առաջ գրած է հեղինակն այս խօսքերս:

պակասութիւնները, խտալիա պիտի չունենայ առողջ և հաստատուն դատողութիւն մը, և ոչ քաջառնաբար հրամայել և դործել:

Գալով առ Ալֆիէրի, ոմանք գրեթէ պաշտած են զսա, ոմանք ալ չափազանց անարգած. անոնք՝ վերադասելով քան զամենայն ողբերգակս հինս և նորս, աւսոնք քան զամենքն ալ վար սեպելով. սակայն ինքն ամենէն ալ զատ ճամբայ բռնելով՝ կըրցաւ բարձրանալ, և նորոյժ մը տալ իտալական բանաստեղծութեան ալ զրականութեան ալ՝ ցամաք և խիստ ոճով մը:

Կըրնան յիշուիլ շատ քնարերգակ և բարոյախօս քերդողք ալ ինչպէս Մանֆրետի, Սքուվերինի, Պոնտի, Բինիտոյի, Ֆրոնկոնի, Սալիոյի, Ֆրանդոնի, Մաճնա. բայց քնարերգական բանաստեղծութիւնք թէ և վսեմականք ըլլան՝ իտալիոյ համար ծովը թափուած ջուր մը կը նմանին. եթէ այդպիսի քերդուածք օգտակար կըրնան ըլլալ, կ'ըլլան՝ երբ ինչպէս Ֆանդոնի և ուրիշ ոմանք ըրին, ազգային նիւթոց և իրենց ժամանակին յարմար բաներու վրայ ըլլան. այս բանս յառաջագիմութիւն մ'է: Եւ առաջագիմութիւն սեպելմբ նաև զանազան գաւառական լեզուօք գրելն. ինչպէս որ Կալլիանի զըրեց նաբոլիացոց բարբառով, Գալլի Բիէմոնդի, Տէլ Բորդա և Կրոստի՝ Միլանի, Մելի՝ Սիկիլիացոց: Կարծեն ոմանք թէ պէտք չէ գաւառական լեզուօք գրել, իբր թէ ատով դպրութե ուսումն կըրնայ զբաղիլ չափէ դուրս. այլ մեզի չափազանց կ'երեւի այդ վախդ. և կարծեմք թէ բարբառոց ուսումն չի վնասեր լեզուի ուսման. մանաւանդ թէ ազգային զարգացման փառաց նոր բան մ'ալ կ'աւելցնէ: Այսպիսի բարբառոց մշակութեան օրինակ մը կ'ընծայէ Կոլտոնի կատակերգութիւն մը, և Կալիանի տնտեսական գրուածով մը փրանկերէն. — եթէ օտար լեզուով գրելն դիւրութիւն մ'է, իտալացոցմէ աւելի ոչ ոք այս դիւրութիւնս ունեցեր է. և Տանդէի ու Բեդարգայի աստեններէն

ալ առաջ և դեռ հիմայ ալ՝ շարունակէ:

Գանք հիմայ արձակաբանից, և յիշենք նախ զՊարեկոյի (1716–1789), իբրև արժանաւոր գրող մը և յանդիմանող ազգային պակասութեանց: Յետ նորա՝ պատմիչք, քաղաքաբանք, տընտեսաբանք, իմաստասէրք, բանադատք, որք այս կամ տանց մօտ նիւթոց վրայ գրեցին՝ ՚ի կիսոյ ժի. դարու մինչև ՚ի 1814: Վիգոյ (1670–1744), Մաշալի (1672–1750), Մաֆֆէի (1675–1755), Ճիսկոնի (1676–1748), Ֆրագարինի (1695–1762), Մաճնոզզի (1707–1768), Ճենովեզի (1712–1769), Կալիանի (1748–1787, Գիւրապոսի 1734–1794), Տենինա (1734–1803), Լանցի (1732–1810), Վերրի (1728–1797), Պեզզարիս (1738–1784), Բալանոյ (1748–1799), Ֆիլանձիերի (1751–1788), Ճիոյա (1767–1829), Չիգոնեսարս (1767–1834), Բոնալեսօի (1771–1835): Այս ամենքն ալ հետեւեցան թէ մեր մէջ թէ օտարաց մէջ եղած ուսմանց յառաջագիմութե, նմանելով ստուգիւ երեւիլի անձանց և թողլով առօրեայ փայլողները: Ամենէն երեւիլքն եղան Վիգոյ և Մուրադորի: Առաջինն զժբաղդ եղաւ. որովհետև ժամանակակիցքն չգիտցան իր յարգը, այլ յետինք. և մեզի համար այն անձանօթ հանճարոց մէկն է՝ որ վհատելոյ յոյս կու տայ: Յետ Մագգիալելլայ և Պոսիւէի առաջին եղաւ որ ճամբայ փնտռէ յառաջացնելու և այլափոխելու զազգս. այս բանիս համար բոլոր մտադրութիւնք զարձուց ՚ի բանական դիտութիւն, կամ յուսումն տիեզերական պատմութեան: Թէպէտ և իրմէ առջի երկուքին պէս ալ խաբուեցաւ հին պատմութեան մէջ, եղածէն աւելի խորհուրդ, գաղտնիք և խորութիւն մը գտնել կարծելով:

Իսկ Մուրադորի արժանաւոր է ամենայն գովեստից և օրինակ ընծայուելու ապագայից: Անխոնջ գործունեայ եկեղեցական, և զրապետ, շատ գործեր հրատարակեց աստուածաբանա-

կան, բարոյական և քննաբանական . այլ անոնցմէ վեր եղան իտալիոյ պատմութեան վրայօք հրատարակածներն . ինքն միայն այս բանիս վրայ շատ աւելի աշխատած է՝ քան ամբողջ գրաւոր ընկերութիւնը միանգամայն : Ազգի մը պատմութիւն յառաջացընելու երեք հարկաւոր գործերն ալ կը կատարէր . այսինքն հաւաքել յիշատակարաններ իտալական իրաց (Rerum Italicarum), ինչպէս որ անուանեց իր բազմահատոր գիրքը, որ առաջին եղաւ այնքան երկար ատեն անծանօթ մնացեալ գրուածոց երեւման . — ծանօթութեամբք լուսաբանել այն պատմական գրուածոց մէջ մթին մնացեալ բաները, լատիներէն գրելով զայն վասն զիտնոց, և իտալերէն համառօտելով ռամկաց համար . — ապա հրատարակել զՏարեգրութիւն իտալիոյ, գործ նշանաւոր և մեծահռչակ, մէջը հաւաքած բազմապատիկ տեղեկութեանց համար : Արդարադատ գրիչ, ոչ չափազանց դատող և ոչ ստրկաբար հետևող, շատ հեղյանդուզն և ուժգին է առանց կորուսնելու վսեմութիւնը և վայելչութիւնը : Այս գործն առիթ, յորդոր և միջոց եղաւ յետագայից՝ հրատարակելու յիշատակներ և մասնական պատմութիւններ գրականութեան, արուեստից, վաճառականութեան, թէ մեծ քաղաքաց և թէ գաւառաց մէջ . և ահա անկէ ետե գրեցին Դիւրապոսի, Լաւցի, Լուքի, Ֆոնդոզցի, Մարիւի, Աֆֆոյ, Ճիոլիւի, Ռոլլիւի, Գարլի, Մալիոլի, Բիւնտոյի, Մարիւ, Տիւտոյ, Ֆիլիպպի, և այլք . բայց ոչ ոք կրցաւ հաւասարել Մուրադորեայ, որ այս դժբաղդ փառքն ալ ունեցաւ իրեն չհասնող աշկերտներ ունենալու :

Բայց չենք կրնար պարծիլ պատմական դպրութիւն մ'ունենալու 'ի վերջն զօտար ժամանակակիցս . վասն զի (թողլով ժեղարու մեծ գիտնականները), յետ Մուրադորեայ՝ մինչդեռ ուրիշ ազգեր մեծամեծ պատմիչներ հանեցին, յիտալիա ոչ ոք երևեցաւ . և ցաւով յիշենք այս պակասութիւնս մինչև

ցայժմ . որովհետեւ ամեն ազգի ալ շատ կարեւոր գործ մ'է այս, և անոր պակասութիւնն կը յայտնուի ամեն տեսակ բարգաւաճանաց և ամենուն գործնական քաղաքականութեան մէջ : Այս տեսակ պատմութիւնն ազգային գոյն մը կու տայ ամեն տեսակ գրաւորական և արուեստական յօրինուածոց . և քողաքավարիչ անձանց՝ օրինակ, խրատ, յարմար առիթ և արժէք :

Երիտասարդ քաղաքագէտն Ֆիլլանձիէրի (1752-1788) ալ արժանաւոր յիշատակի հեղինակ մ'է հարուստ հանճարով . Գիտութիւն օրինաց անուամբ գործ մ'ընծայեց, զոր կը յարգէ հիմալուան Եւրոպիոյ իմաստասիրութիւնն ալ : — Յունագէտ լեզուաբանը և Արեւելագէտը ալ, ինչպէս նաև տատուածաբանը Ժլ դարու՝ արժանի են մտադրութեան և քննութեան, սակայն զլուածնիս շատ չերկարելու համար՝ պարզապէս յիշենք զանոնք . նոյնպէս և նիւթական գիտութեանց վերաբերեալքն, որ Ժլ դարուն մէջ շատ զարգացան, վասն զի, ինչպէս ուրիշ տեղ ալ յիշեցինք, ասոնք քաղաքական վիճակի հետ յարաբերութիւն չունին :

Գալիլէոսի յաջորդքն բազմացան 'ինչուն 'ի 1814 . և անուանիք եղան Եւստաքիոս Մակքրետի (1674-1738), Մորկանէի (1682-1771), Ֆր . Շաւնոյի (1692-1777), Մկ . Պեգգարիս (1716-1781), Սքարսնցանի (1729-1799), Կարլանի (1737-1798), Վոլդա (1745-1826), Մաագերունի (1750-1808), Մաագանէի (1752-1815), և այլն . ամենէն անուանիքն եղան Վոլդա և Լակրուէձիս . ետքինս՝ Ալֆիերեայ քաղաքակից՝ Բիւմոնդի ուսումնական պարծանք եղաւ, ինչպէս Տենիւնա, Պարեյդի, Պոտունի և այլք, գրաւորական պարծանք եղած էին : Իսկ Վոլդա փառք եղաւ Բաւիոյ համալսարանին, որ Ժլ դարուն մէջ կը պայծառանար, ինչպէս նաև Դուրինի և իտալիոյ ուրիշ համալսարանք . որք և մինչև 'ի վերջ այս յեղանակիս՝ իտալիոյ ուսմանց լաւագոյն կենդրոնք էին :

Իսկ արուեստք՝ աւելի հարաւայնոց սեփական ձիրք մ'եղան, մանաւանդ գծագրութիւն. Յունաստան, Իտալիա և Սպանիա՝ աւելի շատ ճարտարներ ընծայած են քան միանգամայն ուրիշ աշխարհք. եթէ Իտալիա կը հարկաւորի օտարաց դպրութենէն լոյս առնուլ, արուեստից մէջ ամենեկին կարօտ չէ աւնոնց. և եթէ անոնցմէ բան առնուլ ուղէ՝ միշտ դէշ և անբնական բան մը կ'առնու: ԺԸ դարուն սկիզբ արուեստք այնքան վար ընկան, որ հագիւ կըրնանք յիշել նկարչաց մէջ քանի մը. Սուրիսէն (1657-1714), Գրեւսի (1665-1747), Ծուզգարեկի (1702-1788), Պադուսի (1708-1787). անգրիազործաց մէջ Գոլլիւնոյ (1723-1793). ճարտարապետաց մէջ Ալֆիերի (1700-1767), Վալսկիլի (1700-1773), Դեմանցա (1705-1789): Մինչդեռ այս յեղանակիս յԱնգղիա, 'ի Գերմանիա և 'ի Փրանկիա լաւագոյն ճարտարք երևեցան Ռէնիոյտի, Հոկարտ, Մէնկս, Անձելիգ Քաւֆման, Վրէն և Դաւիթ, որք յիտալիա և 'ի Հռոմ կու գային սովորելու: Այն ատեն սկսան մեր ճարտարք ալ օտարաց հետեիլ, այսպէս ըրին Լանտի (1756-1839), Աքքիոնի (1761-1817), Պոսսի (1776-1815), Դամոնչի (1815), և այլք: Բայց այս մեղի նմանողաց նմանողին՝ աւելի անոնց պակսութիւնները առնելով քան արժէքը, յայտնի ցուցին թէ որչափ սխալ է նմանութե հետեիլն, փոխանակ ուղղակի Իտալացւոց հին ընդարձակ ոճոյն դիմելու:

Իսկահանճար և զուտ իտալացի արուեստագէտ մ'եղաւ Գալուփա յանգրիազործութեան. անկէ ետե սկսաւ այս արուեստս ընդարձակիլ և մօտենալ Աթենքի Պարթենոնի. ինքն միայնակ տիրեց այս արուեստիս մէջ չունենալով իրեն հաւասար մը (1747-1822). — ճարտարապետութեան մէջ ալ մէկ հատիկ մեծ վարպետ եղաւ Գալուփա (1762-1833): Բայց Միլանի Յաղթական կամարէն ետե ուրիշ մեծ չէնք մը չկանգնեցաւ, դրամից պակսութե

համար. վասն զի ամեն արուեստէ աւելի ճարտարապետութիւնն է որ զըրամական օգնութեան կարօտութիւն ունի:

Բայց եթէ ուրիշ արուեստից մէջ անկումն եղաւ, երաժշտութեան ալ ոսկի դար մ'եղաւ այս յեղանակս. շատ հռչակաւոր եղան յայսմ Բորքորա (1688-1767), Մարչելլոյ (1686-1739), Դարչիմի (1692-1770), Տուրանդի (1693-1755), Լեոյ (1694-1764), Կալուքի (1703-1785), Բերկուեգէ (1704-1737), Կուշիելմի (1727-1804), Սագգիմի (1735-1786), Բաիդիելլոյ (1741-1816), Նիկկարելլի (1752-1837), Չիմարուզա (1704-1801), Բաէր (1771-1834): Բայց քան զասոնք զերազանց եղան Ռոսսինի, Պելլիմի և Տոնիճեդդի:

Ասով իտալական երկրի բեղնաւորութիւնն կը յուսացընէ, որ եթէ հայրենեաց համբաւն և փառք կըրնան առժամանակ մի աղօտանալ ուրիշներու քով, այլ չեն ջնջուիր իսպառ:

2. — Յեղաւնակ (1814-1870):

Առաջին Նաբոլէոնի անկմամբ թէ և Իտալիա ինքնակաց ազգութեան յոյժ քիչ մը կորոյս, սակայն նորէն ստորկութեան չդարձաւ. և եթէ իր երջանիկ ժամանակաց առաջնութիւնը չպահեց, ոչ ալ շատ վար ընկաւ՝ նուաստութեան օրինակ մ'ընծայելու իր ըստացած փառացն 'ի ճշմարիտն և 'ի գեղեցիկ: Լեսինկի ձեռքով 'ի Գերմանիա սկզբնաւորեալ գեղաբնին (esthétique) ազգային գրականութեան զարգացուցիչ սկզբունքն, Կէթէի ու Շիլլէրի ձեռքով աւելի արծարծած, ծաւալեցան յԵւրոպա և մանաւանդ յԻտալիա. այն ատեն հնարեցաւ վիպական (romantique) ըսուած դպրոցն, որ մերժելով դասընտիր աւանդութիւնները՝ նոր զըրականութիւն մը քարոզէր, ազատ 'ի կանխակալ կարծեաց, 'ի համոզմանց դպրոցաց, և աւելի յարմար հիմակուան

դպացմանց, մերժելով հեթանոսական զիցաբանութիւնը և Յունաց ու Հռոմէացեաց հնացեալ պատճառաբանութիւնները, ազգային նիւթեր ընտրելով անոնց տեղ: Այս երկու սկզբանց համար եղած հակառակութիւնները լաւ է լռել քան յիշել, վասն զի երկու կողմէն ալ չափազանցութեան զացին: Ոմանք կ'ողբային հին աստուածոց հաւածումը յերեսաց հիւսիսական միգամած ուրուականաց. ոմանք ալ խորշելով յօլիմպական ստեղծութեանց՝ կ'ընտրէին վհուկները, կախարդները: Ոմանք կը գովէին Մոնղոլի գեղեցիկ զանգատները, որ զիցաբանութեան վրայ դրած ճառին մէջ կ'անիծանէ հիւսիսային փոթորիկը՝ որ բոլոր յունական յստակ երեւակայութեամբ հնարեալ կեղծիքը կը ցրուէր. ոմանք ալ եռանդեամբ կ'ենէին մինչև յամպս, մինչև յուրուականս Ոստիանու և 'ի դիւցազունս Եելտաց. ժամանակ էր որ այս կռուէս ծագի վերանորոգութիւն մը, այս անդունդէն կեանք մը, և ճամարտութիւն մը այս հակառակ կարծիքներէ. պէտք էր որ հետեակք և թռչողք հաւանէին բանականին. պէտք էր որ երկու կողմին սխալներն ալ մէկդի ձգուէին, և առողջ ու լուսաւոր դատողութեամբ ընտրուէին ճամարտութիւնը: Միով բանիւ պէտք էր որ արուեստից մէջ ազատութիւնն՝ անսանձ համարձակութիւն մը չըլլար, որպէս զի նոր ոգի և ոյժ մ'առնուր իտալական գրականութիւնն, և հաւասարաբայլ երթար օտար ազգաց հետ:

Այս նպատակաւ օրագիր մը հաստատեցաւ 'ի Լոմպարտիա Հաշտարար անուամբ (Conciliatore), որ վերանորոգութեան դրօշը կը պարզէր, խելացի հնարքներով ջանալով չուրանալ անցելոյն փառաւոր աւանդութիւնները, և չփակել դուռը ապագային դէմ: Քիչ ատենէն Դոսկանայի մէջ ալ նոյն սկզբամբ ուրիշ օրագիր մը հրատարակեցաւ, իտալական ծաղկաբանոչիռն անուամբ (Anthologia Italiana). երկուքին հրատարակողք ալ խոհական ան-

ձինք էին, և սրտերնին կը վկայէր որ պէտք է այնպիսի նոր դպրութիւն մը կանգնել՝ որ ազգին բնութեան համալարմար ըլլայ, և դեղեցիկը ճամարտին հետ զուգէ: — Մանցունի իր վսեմական հանճարով առաջինն եղաւ որ հետեակաց պահանջմունքը մերժելով, և դպրոցի մը կոյր և գոռոզ աններող արգելքները վար ձգելով արուեստից ազատ զիմեցման ճամբայ մը փորձէ: Նախնեաց ընտիր գրուածովք վարժեալ իր գրաւոր ասպարէզը բացեր էր ոտանաւոր գրուածովք, որը մեծ ընդունելութիւն գտան, և որոց համար Ֆոսգոլոյ անուանեց զնա նոր բանաստեղծ նոր իտալական դպրութեան. ալ աւելի աճեցաւ համբաւն՝ երբ հրատարակեց իր Սրբազան Երգերը, և 'ի Հիւնգ Մայիսի տաղը՝ 'ի մահ Նաբոլէոնի: Այլ այն հին դպրոցի կողմնակցութեան և սուտ աւակղեմիայի հետեողութեան դէմ նետած գլխաւոր մուրհակքն եղան Խօսեցեալքն ըսուած (Promessi Sposi) վիպասանութիւնն, Գարմանիոյա և Ատելքի ողբերգութիւնը. վաղեր Սգոդի հնարման հետեւելով ընծայեց իտալիոյ պատմական վիպասանութիւն մը, որուն հետեցան ամենայն եւրոպական դպրութիւնք. վասն զի նորութիւն ձեռքն և նպատակին ամենուն սիրելի և ժողովրդական կ'ընէր զայն, որով և աւելի յարմար մեր քաղաքականութե: Մանցունի եղաւ սկզբնաւորիչ նոր դպրոցի մը, Լոմպարտեան դպրոցի, իր գրուածներովը և դատաքննութեամբը, և ծաւալեց վիպականութիւնը (romantisme). իր պաշտպանողքն եղան Կրուսի Դեղալոյ, Ֆորէս, Պաճֆունի, Դորդի, Վարեզէ, Տէ Գրիսպոֆորիս, Աքիլէս Մաչի, Տէֆէնտէնդէ Սագգի, Տոշ. Տաւառոյ, և յետոյ Աճելիոյ և Գաւնդոշ. Նշանակիչ (Indicatore) անուանեալ օրագիրն էր գործիք այս նոր ոճոյ հակամիտութեան, և կը հակառակէր իտալական մատենադարանի (Biblioteca Italiana) ըսուած պահպանողական օրագրին. իրեն յաջորդեց Եւրոպական հանդէս (Rivista Euro-

Pea) ըստած օրագիրն նոյն հոգւով :
ի Դոսկանայ պաշտպանըն և հակառա-
կողք ակադեմական կանխակալ կար-
ծեաց՝ եղան Մոնոյանի և Թումազեոյ :
Այս երկու գրագէտքս թէ և ամենայն
ջանք կ'ընէին ազգային նոր դպրութիւն
մը մտցընելու, չէին ալ յետ կենար
յարգելու զհին հեղանակս. մանաւանդ
թէ կը ցուցընէին թէ ինչ կերպով պէտք
է հետեիլ անոնց. և անանկ օրինակներ
տուին որ կը յայտնեն թէ արուեստն
պէտք է միջնորդ ըլլայ մասնաւոր կըր-
թութեան մը և գեղեցիկն, նկատմամբ
բնութեան և ըզձից : Թումազէոյ մասնա-
ւորապէս կը քարոզէր լեզուն յստա-
կել օտար խառնուրդներէ և իր նախ-
նական պարզութեանը դարձընել : Ձի
կըրնար ժխտուիլ որ այս ջանքը և յա-
րումն յազգային լեզուն, և այս ջերմե-
ռանդն իմն խնամքն պաշտպանելու
զայն յամենայն ապականութենէ՝ շատ
օգտակար եղան մեր գրագիտաց. վասն
զի իտալիա եթէ նախընթաց դարուն
մէջ խորունկ մտածողներ ունեցաւ, գրե-
բազդաբար աւելի յստակ ոճով և լե-
զուով գրող չունեցաւ : Պէտք է ուրեմն
երախտագէտ ըլլալ անոնց՝ որք ջանա-
ցին մեր լեզուին իր ազգային փայլումը
տալ. թէպէտև այն մեծ հանճարք՝ լե-
զուէն անդին բան չէին տեսներ, և շատ
հեղ հետեակութեան կ'ընկնային :

Մեր լեզուին վերանորոգողաց կարգը
դասելու է և զԶեզարի, որ առաջնորդ
եղաւ դպրոցի մը՝ որ կը գիտէ զլեզուն
վերածել ժի գարու ազատ և բացայայ-
տիչ պարզութեան. իրաւ այն դարուն
դպրոցն երբեմն քիչ մը չափէ դուրս ե-
լած է, սակայն միշտ նախադասելի է
քան զԺԳ և զԺԵ դարս. վասն զի առ-
ջինին մէջ աւելի ոյժ կ'երևի 'ի պարբե-
րութիւնս, և միտքն ճարտար ձևեր ա-
ռած՝ աւելի կը փայլէ ուժով և անու-
շութեամբ : Բայց այս ալ պէտք չէ մոռ-
նալ՝ որ որչափ ալ վայլէ լեզուին ձևը
պահել, պէտք չէ ալ անշարժ կամ ան-
փոփոխ թողուլ, լեզուն յայտարար է,
զազափարաց պիտոյից և իրաց, զոր
իւրաքանչիւր դարք քաղաքակրթութե-

յառաջ կը բերեն, կը զգան կամ կը
հնարեն. որով եթէ հետևողք ԺԳ դա-
րուն ուզեն իրենց նախօրինակին կա-
պուած մնալ չեն կըրնար օգտել իրենց
հայրենեաց բարգաւաճանաց : Այսպէս
ալ փափագելի է որ նկարչութիւնն ալ
ձիողգոյի և իր դպրոցին ոճէն չհեռա-
նայ :

Երբ իտալիա իմացաւ իր լեզուին
յստակութեան պէտքը, որ ժողովրդ-
դեան մը ազնուագոյն գանձուց մէկն է
և առաջին նշանակ ազգայնութեան,
պէտք էր որ ընտիր արձակաբան գը-
րիչներ ունենար. և ահա ասոնց մէջ
գլխաւորք են Ճիորուանի, թէ և սա
քիչ մ'արուեստակեալ և ճոռումխօս
է. այլ պատիւ կ'ընէ իր հայրենեաց.
վասն զի (թողլով քանի մը դպրոցա-
կան կանխակալ կարծիքները) ճանչ-
ցաւ որ իտալական լեզուն կը զօրանայ
նոր ձևերով. և նոր կենդանութիւն մը
քաղեց օրինակաւ և ոչ ծառայական
նմանողութեամբ օտար դպրութեանց :
Լեզուին յստակութեան վրէժխնդիրք
եղան և Կերարուտիւնի, Վալենտչի, Բու-
ոյի, Գոյումպոյ, Ֆրանչուսիարի, Գոն-
դուչի, Գաւդա, Վալենցիոյ, Նա-
րիուէ, և Մալլուչի :

Դառնալով այս գրաւորական նորու-
թեան շարժման 'ի Դոսկանա և 'ի Լոմ-
պարտիա, յիշենք որ նոր օրագիր մ'ալ
հրատարակեցաւ Նչանակի (Indica-
tore) անուամբ 'ի Լիվոռնոյ, որոյ խմբ-
բազրողք էին Մաճհիւնի, Կոռնարացի
և Պիւնի, որք դպրութեան նորոգութե-
նէ զատ քաղաքական դիտում մ'ալ ու-
նէին : Երբ այս երկու դպրոցաց Դասա-
կանին և Վիպականին վէճը շատ յեր-
կարեց, ճանչցուեցաւ որ պէտք է խոհա-
կան ընտրութեամբ երկուքն ալ միա-
բանել, երկուքին ստոյգ արդիւնքն ալ
յարգել, և թողլով անոնց անունները
ընդունիլ զճշմարիտը. վասն զի գեղե-
ցիկն բացարձակ ըլլալով՝ շատ կերպով
ալ կըրնայ բացայայտիլ : Այս հաշտու-
թեան առաջին յորդորողն 'ի Դոսկանա
եղաւ Նիգոյիւնի, զոր տղայութեանը ա-
տեն Ֆրոզուլոյ ողջուններ էր իրրև մի 'ի

փառացի նոր խտալիոյ, ըստ Մանցոնեայ. վարժեալ հին հեղինակաց ուսմամբ՝ աւելի քան զլոմպարտուցին կը յամառէր հին դպրոցը պաշտպանելու։ Իրեն ասպարէզ ընտրեւ էր զթատրոն, և կը սիրէր տեսարանաց մէջ ներկայացընել յունական զրուցաց ուրուականները. սակայն զգաց նոր վարդապետութեան ազդումը՝ որ կ'ուզէր հին Յունաց և Հռոմայեցոց առարկայից տեղ փոխանակել զազգայինս. իր Անն. Ֆուգարիւնի և Յոհան Բրոյխուս գրուածներով՝ նոր ճամբայ մը բացաւ, իր զմայլեցուցիչ տաղաչափութեամբը ներշնչելով ազնուական զգացմունք հայրենեաց և ազատութեան, և ծաւալելով զայն յողիս բաղմութեան, որք մեծ եռանդեամբ կարգային իր քերդուածները։ Իր հանձարն որ չէր կրնար ուրանալ արդարացի յառաջադիմութիւնը, աւելի ընդարձակ դերասանական ձև մը փնտռեց, և հրատարակեց զԱլեքսիոյ Պրելյայ, որ կըրնայ կոչուիլ ճշմարիտ ողբերգութիւն ազատութեան, մտածութեան և ազրուեստի։ Անկէ ետեւ հրատարակեց ըզփիլիպ. Սիլոցցի, յորում նկարագրէ զյետին ճիզն ապականեալ խտալիոյ, ինչպէս որ Աննուտի մէջ ալ կը ներկայացընէ Միջին դարու դոռոզ և կտրատեալ խտալիոյ մարտիրոսութիւնը։

Նիգոլինի իբրեւ բանաստեղծ և գրիչ միշտ ճշմարիտ նպատակը կը դիտէր, որ է ջանք լաւցընելու զժողովուրդը. ինքն կատարեց գրաւորական առաքելութիւնը՝ զոր սկսեւ էին Բարինի, Ալֆիէրի, Ֆոսգոլոյ և Մոնդի։ Այսպիսի առաքելութեան միաբանեցաւ ուրիշ Դոսկանացի գերագոյն հանձար մ'ալ, ձիոռնոյի. որ նոր կերպարանքով մանկացուց զերգիծաբանութիւն և ոգևորեց. դառն ծիծաղով մը ձաղեց զմոլութիւնս և ընդունայն գոռոզութիւնս, վայելակերպ մեղկութիւնը, ոսկէզօծ պաճուճանքը, և օտարական նմանութիւնները, որոց գերի եղեր էր խտալիա։ Որչափ որ Բալեստիկի և Կոռառոնիոյի զուարճաբանութեամբ գրած էին իրենց երգիծանքը, այնչափ ձիոռնոյի ալ քաղաքակա-

նօրէն։ Ասկէ զատ իր կրաշարժ հոգւոյն տխրութիւնը վայելուչ և քաջարուեստ տաղաչափութեամբ բացատրեց. այսպէս ալ նամակագրութեամբ կը ցուցընէ որ սիրելի և ուղղագիր արձակաբան ալ է եղեր։

Բոլորովին քաղաքական բանաստեղծ մ'է Յակ. Լեոքսուտի, իրազգած ոգւոյ տէր, զարմանալի հանձարով. մահուան գաղափարն միշտ մտացը վրայ էր, իր տկար մարմնոյն պատճառաւ։ Իր հզօր և վսեմ երգերն բաւական են ցուցընելու թէ որչափ զօրաւոր էր ինմա խտալիոյ սէրն, և որչափ փափագէր որ թօթափէ նա ամօթալի քունը և դառնայ իր նախնի փառաց։ Բայց իր իսկական հանձարն ամենէն աւելի կ'երևի իր երգոց մէջ, յորս՝ արարչութեան գեղեցկութեամբ զմայլեալ ոգին՝ կ'արտայայտէ բնութեան խոր զգացումը, միանգամայն և վհատութիւն մը տարակուսի տալեւապով։ Աննման են իր բանաստեղծութիւնքն բնական և մեղամաղձիկ շնորհքով մը, որք կը բուրեն արարչութեան ամեն գեղեցկութիւնները, այլ միշտ մահուան տխրորակ և յօգնեցուցիչ շնչամամբ տողորեալ, նաև ի պայծառափայլութեան կենաց։ Տարածամ մեռաւ, և ողբաց խտալիա մեր գրաւոր հասարակութեւ ամենէն սքանչելի հանձարաց մէկը։

Նոր դպրոցին կը պատկանի և Սիլվիոյ Բելլիգոյ, հռչակելի Բիեմոնդեցին, որոյ անունն միշտ սիրելի է ազնիւ և սիրուն սրտից, և յարգելի է յիտալական նահատակս. անուանի եղաւ իր տաննամեայ բանտարգելութեւ, զոր կրեց վսեմական համբերատարութեւ, և դերասանական գրուածովք։ Գործակից եղաւ Հաշտարար օրագրին, յորում պաշտպանեց ազգային դպրութեան վերանորոգումը. սակայն չի խնայ Մանցոնիի պէս համարձակ ազատութիւն մը տալ գերասանական կերպին. որով կըրնայ ըսուիլ թէ յայսմ Նիգոլինիի պէս ընտրական էր։ Բիեմոնդ որ ընծայեւ էր զԱլֆիէրի իբրեւ հաստատուն և ծանր կերպարանք մը, ընծայեց ըզ-

Բեյլիգոյ իբրեւ գորովի և թաղծագին բանաստեղծ մը: — Բիւնմոնդի կը վերաբերին նաև քաջ թատերագիրն Մարենգոյ, կատակերգուն Ռոդա, որ Ժիրայ կոմսին հետ շատ տարիներ իտալական թատերաց մէջ գովուեցան: Իրաւ է որ իտալիա ուրիշ ազգաց պէս հարուստ թատերական դպրութիւն մ'ունեցած չէ, բայց բաւական յառաջացեալ է, և այսօր ազգային թատր մը ունի որ կըրնայ որ և է ազգաց հետ մրցել: Այս արուեստս պաշտպանութե կարօտ է և իտալացիք ճանչցան որ ամենէն ժողովրդական դրաւոր ձևն է սա որ կարենայ ապահովել երկրի մը անկախութիւն, և բազմութիւնը կրթել. ասով մեծ համբաւ ունեցան Տէլ Բովերէ, Տալլ'Օնկարոյ, Ճիագումեդդի, Պրոֆֆերիոյ, Կերարտի տէլ Դեսդա, Ֆերրարի Դորելլի, և այլն:

Իսկ գերասանական արուեստագիտաց տեղ ուրք լի էին յիտալիա, յաջորդեցին Լուսպարտի, Մարիսի, Վեսպրի, Մարգիոնի, Բեցել, Ինդեռնարի, Մոտենա, Սալվիսի, Ռոսսի, և մանաւանդ Բիսպոյի, որ հռչակուեցաւ 'ի բոլոր Եւրոպա և յԱմերիկա. և այս նշան է որ իտալիա ունի քաջ գրագէտներ՝ ուրք գտան ճարտար և հանճարեղ գերասաններ իրենց գրուածոց թարգման ըլլալու: Կը յուսամք որ յիշէ իտալիա թէ թատրոն ամեն ատեն և ամեն ազգաց մէջ հանճարոց մրցարան և քաղաքականութեան մեծագոյն շարժիչ եղած է:

Վիպասանութեան մէջ իտալիա օտարաց դէմ հանելու շատ անձինք չունի. շատերն կարծեն որ այս կերպ գրուածք յարմար չեն իտալական հանճարոյ. մենք չեմք ուզեր այս բանս քննել. այլ միայն կ'ըսենք որ եթէ այս տեսակ քիչ են հունձք՝ այլ ընտիրք են: Մանցոնիի Խօսեցեալքն՝ որ իր բազմապատիկ արդեամբք մեր մէջ աշխարհածանօթ է, հռչակուած է և 'ի բոլոր Եւրոպա և թարգմանեալ յամենայն լեզու: Ասկէ ետեւ անուանի եղաւ Մարգոյ-Վիսգոնդի վիպասանութիւնն Կրոսսիի,

սիրելի անուն մը իտալիոյ. և քաջ բանաստեղծ երեւալ իր իլտեկոնդէ, փախուստական և Լուսպարտացիք Ա իտալական ըսուած գրուածովք: Արժանաւորք են յիշատակի Եկտոր Ֆիերամօզա և Նիկոլ տէի Լարի՝ վէպքն Ազելիոյ, Մարգարիտա Բուսգերլա՝ Գանդոլֆի, Նոյնպէս և գրիչքն Պասկոնի, Վարսեֆէ և Ռոզիսի: Լորտ Պայռնի ահաւոր ազգեցութիւն և ներշնչմունքն որ բոլոր Եւրոպիոյ վրայ տարածեցաւ, յիտալիա ալ շատ սիրող և հետևող ունեցաւ: Դոմինիկ Կուերրացցի թէ և շատ հետեցաւ անոր ոճոյն, այլ իր հզօր հանճարովը կըրցաւ այնքան բարձրանալ ուր սովորաբար չեն կըրնար հասնիլ միջակ նմանողք. իսկական ձիւք մ'ունէր, և ընծայեց մեզի վիպասանութիւններ որ ամենուն ծանօթացան, ինչպէս Պեկեռնիի պատերազմն, Ֆիորենցայ պաշարումն և Իզապելլա Օրսինի. ուրիշ շատ արձակ գրուածներ ալ ունի լի բանաստեղծութեամբ և յստակ իտալաբանութեամբ:

Կը շարունակուի:

Պ Ա Ղ Ե Ս Տ Ի Ն

(Տես երես 186:)

Ժ. — Երուսաղեմի շրջակայքը:

Ելեմք հիմա Երուսաղեմի Դամասկոս տանող դռնէն, և կը հանգիպիմք կէս փարսախ հեռաւորութեամբ Ժայռից մէջ փորուած տխուր յիշատակարանի մը, զոր աւանդութիւնը հաստատութեամբ Գերեզմանք քաղաւորաց կ'անուանէ: Սանդղով մը ներս իջնելով, ընդարձակ գաւիթ մը կը հասնիմք նոյնպէս Ժայռի մէջ փորուած: Արևմտեան կողմանէ գոց է, և գեղարուեստ գրուածքներով պատշգամաձև նկարուած:

Այս պատշգամին ձախակողմը ցած և անձուկ դուռ մի կայ, որ դէպ 'ի շատ